

Բանալի բառեր՝ դեբիտորական պարտքեր, վաճառք, իրացումից շահույթ, առևտրային վարկ, ֆինանսական պահանջ, կազմակերպություն:

ՀՏԴ 657

ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԿՈՅՈՒԹՅՈՒՆ ԽՄԻՉՔՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ ՀԱՄԱՊՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Առենախոսության թեմա՝
Իրացվելիության վերլուծության և դրա ներքին վերահսկողության հիմնախնդիրները կազմակերպություններում (ՀՀ ակտիվային խմբի արտադրության օրինակով)

Անի ՄԻՐԶՈՅԱՆ
ՀՊՏՀ կառավարչական հաշվառում և աուդիտի ամբիոնի ասպիրանտ

Գիտական դեկավար՝
Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ

Արտադրական կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում առաջանում է դեբիտորների և կրեդիտորների փոխադարձ հաշվառման անհրաժեշտություն: Հարկ է նշել, որ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի ճշգրիտ հաշվառումն ունի բացառիկ կարևոր նշանակություն, քանի որ դրանց գծով հաշվեկշռային հոդվածների մնացորդները և դրանցից յուրաքանչյուրի շրջանառելիության փուլերն ուղղակիորեն ազդում են արտադրական կազմակերպության վճարունակության ու իրացվելիության վրա:

Գործնականում դեբիտորական պարտքերի բարձր կշիռը մեծ թվով կազմակերպությունների համար ստեղծում է նշանակալի դժվարություններ, սակայն ժամանակակից դինամիկ զարգացող արտադրական կազմակերպությունները, որոնք հատկապես գործում են բարձր մրցակցային շուկաներում, պետք է իրականացնեն բավականին ճկուն բաղադրանքներ և օպերատիվ կերպով արձագանքեն տնտեսական միջավայրի փոփոխվող պահանջներին:

Շուկայական տնտեսական հարաբերությունների զարգացմանը համահունչ արտադրական կազմակերպությունների տնտեսական ինքնուրույնության պայմաններում իրացման շուկաների, ծառայությունների, հետևաբար նաև բիզնես գործընկերների, այդ թվում նաև ապագա դեբիտորների ընտրությունը մնում է տվյալ կազմակերպության ղեկավար անձանց հայացքողության ներքո: Ուստի, դեբիտորական պարտքը, որպես իրական ակտիվ, կարևոր դեր ունի ձեռնարկատիրական գործունեության ոլորտում: Վերջինիս բարձր տեսակարար կշիռը արտադրական կազմակերպության ակտիվների ընդհանուր կառուցվածքում նվազեցնում է իրացվելիությունը, ֆինանսական կայունությունը և բարձրացնում է ֆինանսական կորուստների ռիսկը:

Դեբիտորական պարտքերը կարող են առաջանալ տարբեր պատճառներով՝ կախված գործընկերների հետ հաշվարկների բնույթից: Մեծ թվով արտադրական կազմակերպությունների մոտ դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալում բարձր տեսակարար կշիռ ունեն գնորդների, պատվիրատուների, հաճախորդների պարտքերը: Տվյալ դեբիտորական պարտքն օբյեկտիվորեն պայմանավորված է ապրանքային գործարքի և դրա վճարման պահի միջև ժամանակի խզմամբ: Միաժամանակ նշենք, որ վաճառքի ծավալի, հետևաբար նաև իրացումից շահույթի ավելացման նպատակով առևտրային վարկով իրացումը համարվում է հիմնուղիներից մեկը:

Տնտեսական անկայունությունը խիստ բարձրացնում է պարտքերի չվերադարձման ռիսկը, ուստի հայրենական ակախության խմբի արտադրող կազմակերպությունների համար նշված խնդրի վերաբերյալ ևորովի լուծումներ գտնելը ժամանակի հրամայական է: Զանի որ դեբիտորական պարտքերը այն վճարումներն են, որոնք մուտք չեն եղել կազմակերպության բյուջե, հետևաբար դրանք չեն կարող օգտագործվել արտադրական կազմակերպության այն շահերի նպատակով, որոնք կապված են հումքի, նյութերի, սարքավորումների գնման, կրեդիտորների նկատմամբ պարտավորությունների մարման համար: Եթե արտադրական կազմակերպությունում բացակայում է դեբիտորական պարտքերի համակարգված վերահսկողություն, ապա առաջանում է դեբիտորական պարտքերի մի մասը ժամկետանցի փոխանցվելու ռիսկ, որն էլ հետագայում լրացուցիչ դժվարություններ է ստեղծում կազմակերպության իրացվելիության վերահսկողության գործընթացում:

Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեցող մեթոդները լիարժեք հնարավորություն չեն տալիս գնահատել դեբիտոր կազմակերպություններին, սակայն պետք է նշենք, որ յուրաքանչյուր մատակարար կազմակերպություն հետաքրքրված է առաջին հերթին իր գործընկեր գնորդ կազմակերպությունների վճարունակությամբ՝ ֆինանսական դժվարությունները հաղթահարելու ներուժով: Նախորդ ժամանակահատվածի գործարքների հիման վրա դրա վերաբերյալ դատողություն կատարելը ոչ միշտ է դառնում հնարավոր: Դրա հետ կապված՝ անհրաժեշտություն է առաջանում մշակել դեբիտորների արդյունավետ գնահատման մոտեցում: Միաժամանակ, դեբիտորական պարտքերի վերահսկողության արդյունավետության բարձրացման և դրա որակի բարելավման համար նպատակահարմար է իրականացնել վերլուծություն ինչպես դեբիտորների ռիսկի, այնպես էլ դեբիտորական պարտքերի տեսանկյունից ևս:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած դեբիտորական պարտքերի տարբեր բնորոշումներին, դրանք ոչ թե միմյանց հակասում են, այլ հանդես են գալիս մեկը մյուսին լրացնող: Տվյալ տեսակետի հաստատումը մասնագիտական գրականության մեջ կապված է այն բանի հետ, որ մեծ թվով հեղինակներ իրենց բնորոշումներում օգտագործում են ոչ թե մեկ, այլ մի քանի մոտեցումներ: Հետազոտողների առաջին խումբը դիտարկում է դեբիտորական պարտքը որպես կազմակերպության տնտեսամբ երրորդ անձանց պարտքի գումար, ինչը դեբիտորական պարտք հասկացության իրավաբանական բնութագրական մոտեցումն է¹:

Հետազոտողների մեկ այլ խումբ դիտարկում է դեբիտորական պարտքը որպես տնտեսավարող սուբյեկտի գույքի, ակտիվների մաս, ինչը դեբիտորական պարտք հասկացության տնտեսական-իրավական բնութագրական մոտեցումն է²:

Հետազոտողների երրորդ խումբը դիտարկում է դեբիտորական պարտքը որպես վարկ, ինչը դեբիտորական պարտք հասկացության տնտեսական բնութագրական մոտեցումն է³:

Հետազոտողների չորրորդ խումբը դիտարկում է դեբիտորական պարտքը որպես տնտեսական կյանքի վերաբերյալ տեղեկատվություն, որը որոշակի կերպով պետք է արտացոլվի հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում, ինչն էլ դեբիտորական պարտք հասկացության հաշվապահական հաշվառման բնութագրական մոտեցումն է⁴:

Նկատի ունենալով, որ վերջին տարիներին համաշխարհային տնտեսության մեջ գերակայող են ճգնաժամային երևույթները, դեբիտորական պարտքը անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն իր դասական դրսևորումներով, որպես պարտքի գումար, որն առաջանում է գործընկերային հարաբերություններում, այլև կանխատեսել այդ պարտքի չվերադարձման հավանականությունը: Այս հիպոթեզի հիման վրա դեբիտորական պարտքը կարող ենք սահմանել որպես իրավաբանական, ֆիզիկական անձանց պարտավորություններ, որոնք համարվում են արտադրական կազմակերպության շրջանառու միջոցների մաս, որը ժամանակավորապես հանվելով շրջապտույտից վարկի տեսքով տրվում է գործընկերոջ կազմակերպությանը, որի մեծությունը, կապված պարտքի չվերադարձման ռիսկի հետ, ի գործ է ազդելու կազմակերպության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. դեկտեմբերի 19-ի N-2052-Ն որոշմամբ՝ տրվել է դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հետևյալ սահմանումները.

- դեբիտորական պարտքը՝ կազմակերպությանն այլ անձանց (դեբիտորների) կողմից վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի գումարն է,

- կրեդիտորական պարտքը (այդ թվում՝ աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների, շահաբաժինների գծով)՝ կազմակերպության կողմից այլ անձանց (կրեդիտորներին) վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի գումարն է⁵:

Ժամանակակից պայմաններում արտադրական կազմակերպությունների առևտրային ճկունության կարևոր բաղադրիչներից է գնորդների հետ արդյունավետ աշխատանքների կազմակերպումը: Հենց այդ պատճառով է, որ կազմակերպությունները նախընտրում են իրենց հիմնական գնորդների հետ աշխատել առևտրային վարկով, ինչն էլ հանգեցնում է վաճառքի գծով դեբիտորական պարտքերի աճին: Գործնականում այն կազմակերպությունները, որոնք ունենում են իրենց գնորդ կազմակերպություններին ավելի մեծ ծավալի առևտրային վարկով իրացում կատարել, կտրուկ բարձրացնում են իրենց մրցակցային գրավչությունը, ավելացնում են գործընկերների քանակը և վաճառքի ծավալը: Սակայն պետք է նկատել, որ տվյալ դեպքում նման կազմակերպությունները մեծ ծավալի դրամական միջոցներ են ստիպված լինում սառեցնել դեբիտորական պարտքերի ձևով, ինչն էլ ժամանակակից պայմաններում ստիպում է դեբիտորական պարտքերի վերահսկողության համար կիրառել առավել արդյունավետ մեխանիզմներ: Միաժամանակ, նման քաղաքականություն իրականացնող կազմակերպությունները ստիպված են լինում լրացուցիչ միջոցներ ձեռնարկել հաշվեկշռի իրացվելի մակարդակն ապահովելու և ցանկալի վճարունակությունը պահպանելու համար:

Մատակարարների և գնորդների միջև հաշվարկների արդյունավետ կազմակերպումն ուղղակիորեն ազդում է ընթացիկ ակտիվների շրջանառելիության արագացման վրա՝ ապահովելով դրամական միջոցների ժամանակին ստացումները, ինչու չէ՞ նաև կազմակերպության ցանկալի վճարունակությունը:

Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը կազմակերպությունների միջև ներկայում գոյություն ունեցող դրամական հաշվարկների համակարգի անխուսափելի հետևանք են, որի դեպքում առկա է վճարման ժամկետի ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման պահի միջև խզում: Սակայն պետք է նկատել, որ վճարման ցանկացած ուշացում այլ դեպքերում կարող է հանգեցնել ներդրումային ծրագրերի ձախողմանը, պարտքային բեռի ավելացմանը և սնանկացման հավանական ռիսկի բարձրացմանը: Ելնելով նշված խնդրից, կարծում ենք, որ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի շարժի նկատմամբ ներքին վերահսկողության համակարգի ներդրումը և կիրառումը, հայրենական արտադրական կազմակերպություններին խիստ կարևոր է մրցակցային հնարավորությունները ընդլայնելու տեսանկյունից ևս: Արդյունքում՝ իրականացվող վերահսկողական միջոցառումները հնարավորություն կընձեռեն ժամանակին ստանալ տեղեկատվություն կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության տվյալ ուղղության վերաբերյալ, ճիշտ գնահատելու դրամական միջոցների և նյութական ռեսուրսների փաստացի օգտագործումը, հաշվապահական հաշվառման ու հարկային հաշվառման հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը, ինչպես նաև հաստատելու գործարար ծրագրով իրականացվող միջոցառումների կատարման ամբողջականությունը: Միաժամանակ փաստենք, որ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի շարժի նկատմամբ վերահսկողության իրականացումն անհրաժեշտ է հաշվարկավճարային կարգապահության բարելավման համար:

Ընկի որ յուրաքանչյուր առևտրային կազմակերպության հիմնական խնդիրը առավելագույն շահույթի ստացումն է, հետևաբար, ֆինանսական ծառայության և դեկավար անձնակազմի առջև դրվում է դեբիտորական և կրեդիտորական պարտքերի նվազեցման, ժամկետանց պարտքի կրճատման խնդիրը: Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2002թ.

¹Ковалев В.В., Введение в финансовый менеджмент, М.: Финансы и статистика, 2001, с. 156., Бланк И.А. Управление активами, Киев: НикаЦентр, Эльга, 2002, 720 с. Бланк И.А., Управление активами, Киев: НикаЦентр, Эльга, 2002, с. 671.

²Лебедев К., Понятие, правовой режим и механизм реализации дебиторской задолженности Хозяйство и право, 1999, №4, с.35-42, Бухгалтерский учет, Под ред. П.С. Безруких, 4е изд., М.: Бухгалтерский учет, 2003, с. 486.

³Пятов М.Л., Управление обязательствами организации, М.: Финансы и статистика, 2004, с. 20-23.

⁴Ковалев В.В., Введение в финансовый менеджмент, М.: Финансы и статистика, 2001, с. 535-537,

⁵Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դրուս գրման կարգ, հոդված 3, ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի N-2052-Ն որոշում:

դեկտեմբերի 19-ի N-2052-Ն որոշմամբ սահմանվել է նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի ժամկետանցի պայմանները: Մասնավորապես,

- Դեբիտորական կամ կրեդիտորական պարտքը համարվում է ժամկետանց, եթե այն սույն կարգի 2-րդ կետում նշված հիմքերով սահմանված ժամկետում չի մարվել:

- Այն դեպքում, երբ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մարման ժամկետը փոխադարձ համաձայնությամբ երկարաձգվում է, դեբիտորական կամ կրեդիտորական պարտքը համարվում է ժամկետանց՝ նոր ժամկետում չմարվելու դեպքում:

- Այն դեպքում, երբ սահմանված չէ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մարման ժամկետ (ինչպես նաև ցպահանջ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի դեպքում), ապա դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մարման ժամկետ է համարվում այդ պարտքն առաջացնող գործարքի (գործառնության, փաստի) կատարման օրվան հաջորդող 60-րդ օրը:

- Նույն անձանց միջև տարբեր գործարքներից (գործառնություններից) միմյանց նկատմամբ հանդիպակաց դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի հաշվանցումը կատարվում է միայն գրավոր համաձայնությամբ:

Դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մասնակի մարումը չի համարվում պարտքի (չմարված գումարի մասով) մարման ժամկետի հետաձգում⁶:

Նկատի ունենալով նշված հիմնախնդիրը, կարծում ենք, որ ժամանակակից կառավարչական հաշվառման համակարգում իր ուրույն տեղը և դերը պետք է ունենա դեբիտորական և կրեդիտորական պարտքերի գնահատման ու վերլուծության այնպիսի մոտեցումը, որը հնարավորություն կընձեռի ապահովել կազմակերպության հաշվեկշռի իրացվելիության վերահսկողության համակարգի շրջանակներում ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հիմնական բաղադրիչների գծով անհրաժեշտ կառուցվածքային փոփոխությունների իրականացումը:

Շուկայական հարաբերությունների դինամիկ զարգացումը պահանջում է անընդհատ վերափոխել արտադրական կազմակերպության կառավարման մեխանիզմները: Ուստի, տվյալ կազմակերպության իրացվելիության կառավարման հայեցակարգի շրջանակներում դեբիտորական պարտքի վերահսկողությունն անհրաժեշտ է ընդունել որպես համապարփակ գործընթաց, որը ներառում է ինչպես պարտքի առաջացման հավանականության կանխատեսումը, այնպես էլ դրա ժամկետանցի դեպքում դրա վերադարձման մեխանիզմները:

Հաշվի առնելով վերը բերված բնութագրական մոտեցումները մեր կողմից դեբիտորական պարտքը բնութագրվում է որպես բազմակողմանի ներգործության գործընթաց (կազմակերպության կառավարման բոլոր ենթահամակարգերի կողմից պարտքի չվերադարձման ռիսկի նվազեցման մոտեցումների համատեղում), որը հնարավորություն է ընձեռում ապահովել արտադրական կազմակերպության օպտիմալ ֆինանսատնտեսական վիճակ և շահութաբերության լավագույն մակարդակ՝ հետաձգված վճարումների շրջանառելիության աճի հաշվին:

Գործնականում դեբիտորական պարտքերի արդյունավետ մակարդակ ապահովվում է՝ ի հաշիվ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոխկապակցված վերահսկողության: Կարևորելով տվյալ խնդիրը, մեր կարծիքով, գործնականում կազմակերպության մասնագետների կողմից պետք է տրվեն հետևյալ հարցերի պատասխանները.

- Արդյո՞ք նպատակահարմար է գործընկերոջ վարկավորումը,
- Արդյո՞ք գործընկերը կվերադարձնի պարտքը,
- Տվյալ գործընկերոջ հետ ինչպիսի՞ն է պարտքի վերադարձման ռիսկը:

Միև կոնկրետ գործընկերոջ հետ պայմանագրային հարաբերություններ ձևավորելը, անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել գնորդ կազմակերպության վարկունակությունը, իսկ տնտեսական փոխգործունեության գործընթացում՝ գնահատել տվյալ կազմակերպության վճարունակությունը:

Ընդհանուր առմամբ, հայրենական մշակող արդյունաբերության արտադրական կազմակերպություններում դեբիտորական և կրեդիտորական պարտքերի շարժընթացը 2013-2015թթ. ներկայացված է աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1.
Մշակող արդյունաբերության արտադրական կազմակերպությունների
դեբիտորական և կրեդիտորական պարտքերի շարժընթացը 2013-2015թթ. (մլն դրամ)**

Անվանումները	2013	2014	2015
Դեբիտորական պարտքեր, որից	155 274.6	182 484.9	171 145.8
Ժամկետանց	1 541.7	1 648.0	2 680.9
Կրեդիտորական պարտքեր, որից	142 420.9	195 809.9	199 626.7
Ժամկետանց	364.7	308.6	326.7

Բերված տվյալներից հետևում է, որ վերլուծվող ժամանակահատվածում աճման միտում են դրսևորել ինչպես դեբիտորական պարտքերը, այնպես էլ կրեդիտորական պարտքերը: Մասնավորապես, 2015թ. 2013թ. նկատմամբ դեբիտորական պարտքերն աճել են 15871,2 մլն դրամով կամ 10,22%-ով: Նույն ժամանակահատվածում ժամկետանց դեբիտորական պարտքերը աճել են 73,89%-ով, ինչը գնահատվում է բացասական:

Իր հերթին 2015թ. 2013թ. նկատմամբ կրեդիտորական պարտքերն աճել են 57205,8 մլն դրամով կամ 40,16%-ով: Հարկ է նկատել, որ նույն ժամանակահատվածում ժամկետանց կրեդիտորական պարտքերը դրսևորել են նվազման միտում՝ 10, 42%-ի չափով:

Վերոնշյալի համատեքստում հայրենական ավակառույցի խմբից արտադրող կազմակերպություններում դեբիտորական և կրեդիտորական պարտքերի համեմատական գնահատականը ներկայացվել է աղյուսակ 2-ում:

⁶Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրս գրման կարգ, հոդված 4, ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի N-2052-Ն որոշում:

Աղյուսակ 2.
Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի համեմատական գնահատականը հայրենական ակտիվային խմբիներ արտադրող կազմակերպություններում՝ 2015թ. (հազ. դրամ)

	Երևանի ՎԱՆ արտադրական ֆիրմա ԲԲԸ	Վեդի Ավրո ՓԲԸ	Երևանի կրարատ կոնյակի-գինու կոմբինատ ԲԲԸ	Երևանի Շամպայն գինիների գործարան ԲԲԸ	Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ	Ավշարի գինու գործարան ՍՊԸ	Կրմենիա Վայն գործարան ՍՊԸ	ՄԱՊ ՓԲԸ
Դեբիտորական պարտքեր	2 313	1 245 813	5 381 418	529 362	3 304 580	635 801	3 403	2 077 421 2 077 421
Կրեդիտորական պարտքեր	5 711	1 375 247	738 216	276 642	980 739	495 324	7 837 122	951 860 951 860
Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի տարբերությունը (+,-)	-3 398	-129 434	4 643 202	252 720	2 323 841	140 477	-7833719	1125561

Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալներից հետևում է, որ դեբիտորական պարտքերի մեծ ծավալ ունեն Երևանի Արարատ կոնյակի-գինու կոմբինատ ԲԲԸ-ն, Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ-ն, Վեդի Ավրո ՓԲԸ-ն: Կրեդիտորական պարտքերի գծով առաջին եռյակում են Արմենիա Վայն գործարան ՍՊԸ-ն, Վեդի Ավրո ՓԲԸ-ն և Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ-ն:

Հարկ է նշել, որ հետազոտված ակտիվային խմբիներ արտադրող հայրենական կազմակերպություններից կայուն պասիվների, և հետևաբար, ընթացիկ ֆինանսական պահանջի (պաշարներ+ դեբիտորական պարտքեր – կրեդիտորական պարտքեր) կարգավորման ուղղությամբ լուծումներն արդյունավետ են եղել Երևանի ՎԱՆ արտադրական ֆիրմա ԲԲԸ-ում, Վեդի Ավրո ՓԲԸ-ում և Արմենիա Վայն գործարան ՍՊԸ-ում: Հետազոտված մյուս կազմակերպությունները գործնականում ունեն ընթացիկ ֆինանսական պահանջի կարգավորման խնդիր, ինչը, մեր կարծիքով, պետք է լուծվի իրացվելիության ամբողջական վերահսկողության մարտավարական քայլերի իրականացմամբ:

Հայրենական ակտիվային խմբիներ արտադրող կազմակերպություններից Շամպայն գինիների գործարան ԲԲԸ-ի 2009-2016թթ. ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա ստորև բերված աղյուսակ 3-ում ներկայացրել ենք դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի կազմի ու կառուցվածքի շարժընթացը:

Աղյուսակ 3.
Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ում դեբիտորական և կրեդիտորական պարտքերի համեմատական վերլուծությունը 2009-2016թթ.


Անվանումները	2009	2010	2011	2012	2013	2014	2015	1016
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով, հազ. դրամ	90003	514 638	224131	563265	622591	469935	519538	613436
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով ցուցանիչի տեսակարար կշիռը ընթացիկ ակտիվներում, %	8,2	49,9	23,6	50,4	49,2	45,8	45,9	46,5
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով, հազ. դրամ	61 296	100 054	180323	215652	116033	261876	276642	119349
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով ցուցանիչի տեսակարար կշիռը ընթացիկ պարտավորություններում, %	39,14	66,69	52,68	50,80	43,53	72,95	51,08	34,13

Ըստ աղյուսակ 3-ի, Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ում 2009-2016թթ. ընկած ժամանակահատվածում նշանակալիորեն աճել է վաճառքների գծով դեբիտորական պարտքեր ցուցանիշը՝ 523433 հազ դրամով կամ 6,82 անգամ: Ինչ վերաբերում է ընթացիկ ակտիվներում վաճառքի գծով դեբիտորական պարտքերի կառուցվածքային փոփոխությանը, ապա այն եապես դրսևորել է աճման միտում և դրանով իսկ բացասական ներգործել շրջանառու կապիտալի շրջապտույտի վրա: Ամենաբարձր տեսակարար կշիռ այս ցուցանիշն ունեցել է 2012թ.՝ կազմելով 50,4 %:

2009-2016թթ. ընկած ժամանակահատվածում այս կազմակերպությունում գնումների գծով կրեդիտորական պարտքերն աճել են 58053 հազ. դրամով կամ 94,71 %-ով: Հարկ է նշել, որ գնումների գծով կրեդիտորական պարտքերի տեսակարար կշիռն ընթացիկ պարտավորություններում, ըստ միջին ցուցանիչի, եղել է 51,38%-ի սահմաններում: Ընդ որում, 2014թ. այն կազմել է 72,95%:

Միաժամանակ, 2009-2016թթ. ընկած ժամանակահատվածում Երևանի շամպայն-գինիների գործարան ԲԲԸ-ում 2010, 2013 և 2016թթ. գնումների գծով դեբիտորական պարտքերը գերազանցել են վաճառքների գծով կրեդիտորական պարտքերին (տես՝ գծապատկերը):

Երևանի շամայն-գինիների գործարան ԲԲԸ-ում դեբիտորական և կրեդիտորական պարտքերի տարբերությունը 2019-2016թթ.



Բացառությամբ նշված տարիների, Երևանի շամայն-գինիների գործարան ԲԲԸ-ում մյուս ուսումնասիրված տարիներին արդյունավետ է եղել ընթացիկ ֆինանսական պահանջի մասով վերահսկողությունը:

Ամփոփելով նշենք, որ ակտիվային խմիչքներ արտադրող հայրենական կազմակերպություններում իրացվելիության արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար կարևոր է ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հիմնական բաղադրիչների միջև որոշել նախընտրելի կառուցվածքները, ինչը մեր կողմից կներկայացվի հետագա հետազոտական աշխատանքներում:

Ներկայացվել է 13.07.2017թ.
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.